Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-764[12]-16.01.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 204.2.-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «կեղծ տվյալներ ներկայացնելը,» բառերից հետո լրացնել «ինչպես նաև բռնագանձման ենթակա գույքին հասանելիությունն ապահովելու պարտապանի պարտականությունը խախտելը» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 206[5] –րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 206[5]. Հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը, ինչպես նաև հարկադիր կատարողի որոշումները, պահանջները և հանձնարարականները չկատարելը**

Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը, ինչպես նաև հարկադիր կատարողի որոշումները, պահանջները և հանձնարարականները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասից հանել «206[5],» թիվը և կետադրական նշանը: :

Հոդված 4. Օրենսգրքի 223[1] –րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) Հարկադիր կատարողը՝ սույն օրենսգրքի 204.2.-րդ և 206[5]-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում հանել «և 204.2-րդ հոդվածով» բառերը:

Հոդված 6. Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ~~1985 թվականի դեկտեմբերի 6-ի~~ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 204.2.-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «կեղծ տվյալներ ներկայացնելը,» բառերից հետո լրացնել «ինչպես նաև բռնագանձման ենթակա գույքին հասանելիությունն ապահովելու պարտապանի պարտականությունը խախտելը» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 206[5] –րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 206[5]. Հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը, ինչպես նաև հարկադիր կատարողի որոշումները, պահանջները և հանձնարարականները չկատարելը**

Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը, ինչպես նաև հարկադիր կատարողի որոշումները, պահանջները և հանձնարարականները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասից հանել «206[5],» թիվը և կետադրական նշանը: ~~«206[5] բառերը~~:

Հոդված 4. Օրենսգրքի 223[1] –րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «:» կետադրական նշանը փոխարինել «.» ~~«.» կետադրական նշանը փոխարինել «,»~~ կետադրական նշանով.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) Հարկադիր կատարողը՝ սույն օրենսգրքի 204.2.-րդ և 206[5]-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասում հանել «և 204.2-րդ հոդվածով» բառերը:

Հոդված 6. Օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից: